



ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՍՆԻ 2021 Թ. ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը 2021 թ. շարունակել է քարոզչական իր ուրույն գործունեությունը՝ լույս ընծայելով եւ տարածելով գիտական եւ հոգեւոր-ուսուցողական եւ քարոզչական գրականություն:

Անցած՝ 2021 թ. հրատարակությունը լույս է ընծայել մի շարք քարոզչական բնույթ ունեցող գրքեր, աղոթագրքեր, աստվածաշնչագիտական եւ վարքագրական բնույթի աշխատություններ եւ բնագրեր: Հայագիտության շրջանակներում լույս են ընծայվել պատմաբանասիրական, վավերագրական, բնագրագիտական, թարգմանական բնույթի ժողովածուներ եւ ուսումնասիրություններ, քարտեզներ, ինչպես նաեւ եկեղեցական օրացույցներ:

Բացի գրքերի հրատարակություններից՝ Հրատարակչական բաժինը նաեւ համակարգել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնաթերթերի՝ «Էջմիածին» ամսագրի եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ խմբագրությունների գործունեությունը: 2021 թ. ընթացքում լույս են ընծայվել «Էջմիածին» ամսագրի 12 համարները, որոնք, բացի տպագիր տարբերակից, հասանելի են նաեւ էլ. արխիվի միջոցով: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 70-ամյակի առիթով ամսագրի Ը համարում ներառված նյութերը լուսաբանում են Վեհափառ Հայրապետի գործունեության մի շարք բնագավառներ:

«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը, ըստ սահմանված ժամանակահատվածի եւ պարբերականության, 2021 թ. եւս լույս է ընծայել 24 համար, որոնց էջերում առաջին հերթին տպագրվել են Ամենայն Հայոց Հայրապետի տարբեր առիթներով խոսված բոլոր ուղերձներն ու պատգամները, տեղեկատվական համակարգի տրամադրած բոլոր, ինչպես նաեւ թեմերից առաքված լրատվական նյութերը: Պարբերաբար տպագրվել են կրոնական, պատմական, գրականագիտական, արվեստ-

տաբանական, բարոյահոգեբանական ու հրապարակախոսական հոգվածներ: Թերթի խմբագրությունը եւս տպագրության է պատրաստել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի ծննդյան 70-ամյակին նվիրված հոգվածներ:

Շնորհակալությամբ հիշենք Մայր Աթոռի հրատարակչության բոլոր հեղինակներին եւ աշխատակիցներին՝ խմբագիրներին, սրբագրիչներին, էջագրողներին, տպագրիչներին, կազմարարներին եւ այլոց, որոնց միասնական աշխատանքի շնորհիվ ընթերցողի սեղանին են դրվում արժեքավոր ու օգտակար հրատարակչություններ: Հատուկ շնորհակալությամբ պետք է հիշենք նաեւ Մայր Աթոռի հրատարակչության մեկենասներին՝ թե՛ տարբեր ֆոնդերով եւ թե՛ առանձին անհատական մեկենասությամբ օժանդակության համար:

Ըստ այսմ՝ 2021 թ. Մայր Աթոռի հրատարակչությունը լույս է ընծայել՝

Ա. «Թուրք Պալոսի Առաքելոյ» ֆննական բնագիր (աշխատասիրութեամբ Արմէն Մալխասեանի):

Քննական բնագիրը աշխատասիրողի շուրջ քսանամյա ջանքերի արդյունք է: Այն հրատարակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունում՝ որպէս Մաշտոցի անվան Մատենադարանի «Հայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարի հերթական հատոր: Աշխատությունն ընդգրկում է Պողոս առաքյալի անունով ձեռագրերում հիշատակված բոլոր նյութերի՝ 15 թղթերի (նաեւ Կորնթացիների Գ. թղթի) քննական բնագրերը, «Յաւելուած» բաժնում՝ թղթերին առնչվող հավելյալ գործերը («Յառաջաբան, Վկայութիւնք, Բովանդակութիւնք ընթերցուածոց եւ վկայութեանց, Յառաջագիր, Յանկ», ինչպէս նաեւ «Վերագիր, Թելագրութիւն, Նաւարկութիւն ի Հոռմ» գործերը). ամբողջը ներկայացված է տարընթերցվածներով, ծանոթագրություններով՝ հունարենի հետ համեմատությամբ: Համեմատելի 286 ձեռագրերից՝ ներառյալ ԵԶ. դարն ամբողջովին, ոչ թե խմբավորված, համեմատված են 74 ձեռագրեր (ներառյալ հնագույն Ճաշոց եւ Մաշտոց ձեռագրերի ընթերցվածները), 72 ձեռագիր պատառիկներ, ինչպէս նաեւ 1666 թ. Ոսկանյան, 1805 թ. Զոհրապյան, 1860 թ. Բագրատունյան, 1895 թ. Կոստանդնուպոլսի եւ 1930 թ. Ա. Վարդանյանի Եւթաղի Մատենագրության աշխատության տպագրերը, երկրորդ տարընթերցվածներում արտահայտված են Սուրբ Բարսեղ Կեսարացու, Սուրբ Հովհան Ոսկեբերանի, Սուրբ Գրիգոր Նազիա-

զանցու, Սուրբ Գրիգոր Նյուսացու եւ Ե.—ԺԲ. դարերի հայ մատենագիրների երկերում օգտագործված աստվածաշնչային վկայակոչությունները եւ այլն: Բնագրի պատրաստման համար կիրառված են ինչպես հայաստանյան, այնպես էլ արեւմտյան հայագետների կողմից ընդունված բնագրագիտական սկզբունքները (պայմանական նշաններ, կոդավորման համակարգ եւ այլն), որով աշխատությունը կարող է հանդիսանալ Աստվածաշնչի մյուս գրքերի բնագրերը պատրաստողների համար նմուշ-ուղեցույց: Գիրքը նախատեսված է ինչպես բնագրագետների, այնպես էլ աղբյուրագետների, ձեռագրագետների, լեզվաբանների, աստվածաբանների եւ, առհասարակ, հայ հին թարգմանական գրականության հետաքրքրվողների համար: «Պօղոս առաքելի թղթերը» աշխատությունը Աստվածաշնչի՝ Նոր Կտակարանի գրքերից հրատարակված առաջին քննական բնագիրն է: Ներկա ուսումնասիրության մեջ փորձ է արվում վերականգնել սահակ-մեսրոպյան ընկալված բնագրի նախնական վիճակը՝ որպես պատմամշակութային խոշորագույն երեւույթի, որն իր վերջնական տեսքն է ստացել 433—436 թվականներին: Գիրքը հրատարակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական եւ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհուրդների երաշխավորությամբ:

Բ. Շնորհի աքեպիսկոպոս Գալուստյան, «Սրբեր. աստվածաշնչյան, համաօրհաստնական եւ հայագրի» (փոխադրությունը արեւելահայերենի՝ Լիլիթ Հակոբյանի):

Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի երեք գրքերի՝ «Աստվածաշնչյան սուրբեր» (Երեւան, 1997), «Հայագրի սուրբեր» (Երեւան, 1997) եւ «Համաօրհաստնական սուրբեր» (Երեւան, 1997) միավորումը՝ արեւելահայ գրական լեզվի փոխադրմամբ, ունի հետեւյալ նպատակները. ա. ներկայացնել Հայ Եկեղեցու տոնակարգում տեղ գտած եւ ինչ-ինչ պատճառներով դուրս մնացած սրբերի վարքերի ու վկայաբանությունների ամբողջական պատկերը մեկ գրքում, ինչը կընդարձակի ընթերցողների հետաքրքրության շրջանակն ու ամբողջ ծավալով հասանելի կդառնա, բ. Հայ Եկեղեցու հոգեւոր ժառանգության կարեւորագույն մասը՝ սրբերի կյանքն ու գործունեությունը արեւելահայերենով ներկայացնելով՝ հասանելի եւ դյուրըմբռնելի ենք դարձնում Եկեղեցու բոլոր զավակների համար: Այսպիսով, եթե արեւմտահայ գրական լեզվին տիրապետող մարդկանց համար առկա են Շնորհք արքեպիսկոպոսի վերոնշյալ գրքե-

րի 1997 թ. հրատարակությունները, ապա այժմ հնարավոր կլինի գրքի հասանելիությունն ապահովել արեւելահայ գրական լեզվակիրներին, գ. գրքի վերջում տրվող սրբերի՝ այբբենական էջանշմամբ ցանկը գիրքը վերածում է յուրահատուկ հանրագիտարանի, որն այլ կերպ կարելի է անվանել «Հայ Եկեղեցու սրբերի հանրագիտարան», գ. արեւելահայերենի փոխադրմամբ՝ գրքի գիտահանրամատչելիության ընդարձակումը հնարավորություն կտա Հայ Եկեղեցու զավակներին, անկախ տարիքից, հանգամանալից ծանոթանալ Եկեղեցու տոներին (երբեմն նաեւ ոչ տոներին) սրբերից յուրաքանչյուրի կյանքին ու գործունեությանը: Այս առումով գիրքը մեծ հնարավորություն է ընձեռում միջին ու ավագ դասարանի սաներին՝ տեղեկանալու հայրենի Եկեղեցու սրբերի կյանքին ու գործունեությանը, եւ հոգեւոր ժառանգության հմուտ տիրապետմամբ՝ դիմակայել ԻՍ. դարի մարտահրավերներին, ե. չնայած այն թյուրըմբռնմանը, թե համացանցում այսօր կարելի է գտնել ցանկացած տեղեկություն, վստահաբար կարող ենք ասել, որ ոչ մի կայքէջում որեւէ սրբի վերաբերյալ հնարավոր չէ գտնել այնքան ամբողջական տեղեկություն՝ համառոտ, բայց եւ բովանդակալից, որքան այս գրքում, իսկ դրա արեւելահայերենով հասանելիությունը, անշուշտ, մեծացնելու է ընթերցողների հետաքրքրությունն ու, ինչու ոչ, սերը դեպի մեր Եկեղեցու սրբերը:

Գ. «Սրբալույս Մյուռոնը հայ մատենագրության մեջ (Ե.—ԺԹ. դարեր)» բնագիր (աշխատասիրությամբ Վարդան Դեւրիկյանի):

Ժողովածուի մեջ ի մի են բերված Ե.—ԺԹ. դարերի կրոնաաստվածաբանական եւ գրական այն գործերը կամ նրանց հատվածները, որոնք նվիրված են Սրբալույս Մյուռոնին: Ժողովածուի նյութերը ներկայացվում են ժամանակային ընթացքով, ներժանրային դասակարգմամբ եւ թեմատիկ խմբավորմամբ, շնորհիվ որի առավել ցայտուն է երեւում Ս. Մյուռոնին ընծայված ազգային-եկեղեցական բացառիկ հարգության ձեւավորումը դարերի ընթացքում: Գիրքը կազմված է 4 բաժնից (առաջաբան, բնագրեր, ծանոթագրություններ եւ ցանկեր): Առաջաբանում ներկայացվում են Սրբալույս Մյուռոնի օրհնության եւ առանձնահատուկ պաշտամունքի ձեւավորման դավանաբանական եւ ազգային-քաղաքական նախադրյալները, Մյուռոնը հայ մանրանկարչության մեջ եւ Սրբալույս Մյուռոնի հետ կապված ստեղծագործությունները, Մյուռոնի ժողովրդական պաշտամունքը եւ Ս. Մյուռոնի օրհնության ժամանակ Ս. էջմիածին

կատարված ուխտագնացությունները: Գիրքն ունի 135 միավոր բնագիր եւ տարբեր բնագրերի՝ Մյուռոնի հետ կապված բնագրային հատվածներ: Մի շարք դեպքերում մեկ միավորի ներքո հավաքված է մոտ 10 միավոր, ինչպես օրինակ՝ «Կանոնագիրք Հայոց»-ի կանոնախմբերի Ս. Մյուռոնին վերաբերող բոլոր կանոնները կամ մի հեղինակի մի քանի գործերը: Յուրաքանչյուր գործ առանձին միավոր հաշվելու դեպքում միավորների թիվը կանցնի 200-ից: Գրքում տեղ գտած բնագրերը ներկայացվում եւ քննվում են օծություն յուրի մասին ընդհանուր քրիստոնեական մատենագրության համատեքստում:

Դ. «Հայ մատենագիրները Սուրբ Հաղորդության խորհրդի մասին» բնագիր (աշխատասիրությամբ Հակոբ Քյուսեյանի):

Ժողովածուն ընդգրկում է Ե. —ԺԸ. դդ. հայ մատենագիրների խորհրդածություններն ու վերլուծական դիտումները Ս. Հաղորդության խորհրդի մասին: Հայ միջնադարի ծիսական (եւ ոչ միայն ծիսական) մատենագրության մեջ, ըստ իրենց բովանդակության, զատորոշվում են Ս. Հաղորդության վերաբերյալ խորհրդական, բարոյաբանական եւ հակաճառական բնույթի մտածումներ, որոնք հնարավոր ընդգրկումով մեկտեղված են ներկա ժողովածուի մեջ: Ժողովածուն ունի ծանոթագրություններ, որոնք մատնացույց են անում վկայությունների աղբյուրները: Ժողովածուն ոչ միայն գիտական, այլեւ գործնական նշանակություն ունի. այն կարող է օգտագործվել ծեսի աստվածաբանության դասավանդման մեջ:

Ե. Արսեն Հարությունյան, Հին Երեւանի եպիսկոպոսանիստ եկեղեցին՝ Երկուերեսնի — Ս. Պողոս-Պետրոս (խմբագիրներ՝ Գեորգ Տեր-Վարդանյան եւ Գագիկ Սարգսյան):

Աշխատությունը նվիրված է հին Երեւանի երբեմնի նշանավոր հոգեւոր-մշակութային կենտրոններից մեկի՝ մականվամբ Երկուերեսնի, իսկ ավելի ուշ Ս. Պողոս-Պետրոս անունով հայտնի եկեղեցու պատմության՝ ցարդ պատշաճ ուշադրության շարժանացած էջերի լուսաբանմանը: Առանձին ուսումնասիրության նյութ են դարձել եկեղեցուց մեզ հասած որմնանկարների մնացորդները, որոնց վաղագույն շերտերը թվագրվում են դեռեւս վաղ միջնադարով, իսկ գրավոր-մշակութային ժառանգության՝ ձեռագիր մատյանների եւ վիմագրերի համալիր քննությունը լրացնում է աղբյուրագիտական նյութը նոր ու հավաստի տեղեկություն-

ներով: Ուսումնասիրվող նյութի շրջանակներում տեղեկություններ են հաղորդվում նաեւ եկեղեցու շրջակա հուշարձանների՝ Կաթողիկե եկեղեցու, աշտարակի, Դիվ-սուլթանի մզկիթի, շուկա-հրապարակի եւ այլ շենք-շինությունների մասին, որոնց համապատկերում առավել ընկալելի ու որոշակի է դարձել խնդրո առարկա եկեղեցու առեղծվածային թվացող հարցերի պարզաբանումը:

2. «19-րդ դարի հայ գրականության ֆրեստոմատիա» (աշխատասիրութեամբ Վաչագան Գրիգորյանի):

Քրեստոմատիան օժանդակ ձեռնարկ է հոգեւոր կրթօջախներում սովորողների համար: Այն «19-րդ դարի հայ գրականության պատմություն» (Ս. Էջմիածին, 2018) դասագրքի բաղկացուցիչ մասն է: Եթե դասագրքում ներկայացված է ԺԹ. դարի գրականության զարգացման ընթացքը՝ տեսական հիմնավորումներով, վերլուծությամբ ու շրջանաբաժանումներով, ապա քրեստոմատիան նույն ժամանակահատվածի փաստական գեղարվեստական նյութն է՝ ընտրված գործերով ու հատվածներով: Քրեստոմատիան ուսանողներին ազատ մտածելու, ինքնուրույն վերլուծություններ անելու մեծ հնարավորություն կտա: Ընտրված բանաստեղծությունները կամ արձակի կարեւոր հատվածները սովորողների ուշադրությունը բեւեռելու են կարեւոր հարցադրումների վրա, ինչը սովորաբար ընթերցանության ժամանակ եւ կամ էլ ժամանակի սղության պատճառով ուղղակի անտեսվում են: Հայ գրականության տասնյակ հազարավոր էջերից ընտրվել են այնպիսի գործեր եւ հատվածներ, որոնք գերազանցապես առնչվում են Հայ Առաքելական Եկեղեցուն, քրիստոնեությանը: Քրեստոմատիան սկսվում է «Օրհներգութիւն ազգային» երգով եւ ավարտվում է Ավետիք Իսահակյանի՝ Խրիմյան Հայրիկի մասին հուշերով: Բանաստեղծներից առանձնացված են Հարություն Ալամդարյանի, Խաչատուր Աբովյանի, Ղեւոնդ Ալիշանի, Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Պետրոս Դուրյանի, Հովհաննես Թումանյանի, Հովհաննես Հովհաննիսյանի այն բանաստեղծությունները, որոնք առնչվում են քրիստոնեությանը կամ Հայ Առաքելական Եկեղեցուն: Արձակից եւս ընտրված հատվածները (Աբովյանի «Վերք Հայաստանի», Մուրացանի «Իմ կաթոլիկ հարսնացուն», «Հայ բողոքականի ընտանիքը», «Խորհրդավոր միանձնուհին», «Նոյի ագռավը», Պռոշյանի «Կովածաղիկ», «Սկիզբն երկանց» եւ այլն) վերաբերում են քրիստոնեությանը, առնչ-

վում են Հայ Առաքելական Եկեղեցուն: Քրեատոմատիան ներկայացնում է գրականության զարգացման ընթացքը: Օրինակ՝ Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունները նպաստել են Թումանյանի, Իսահակյանի երկերի կայացմանը: Բերված են այնպիսի գործեր, որոնք նպաստել են այս հեղինակների երկերի ստեղծմանը: Քրեատոմատիան այս սկզբունքով է կազմված: Քրեատոմատիան կազմվել է տարիների ընթացքում: Դրա տպագրությունը մեծ չափով կնպաստի ուսանողների իմացության հարստացմանը եւ ավելի դյուրին կդարձնի ծավալուն գրական նյութի յուրացման ընթացքը:

Է. Վալերի Թումյան, «Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթեոս Ա. Չունաշյան (1858—1865)» (ռուսերեն):

Գիրքն ընթերցողին ներկայացնում է ԺԹ. դարի երկրորդ կեսի Հայ Եկեղեցու պատմության եւ Մատթեոս Ա. Չունաշյան կաթողիկոսի գործունեության մի շարք կարեւոր հարցեր: Վալերի Թումյանը արխիվային մեծաքանակ նյութերի, մամուլի եւ քննության ենթակա խնդիրներին առնչվող ուսումնասիրությունների օգտագործմամբ, ըստ ամենայնի, ներկայացնում է Հայ Եկեղեցու՝ 1857—1865 թթ. ժամանակաշրջանի պատմությունը: Հեղինակը, սկսելով Ներսես Ա. Աշտարակեցի կաթողիկոսի մահվանից հետո նոր կաթողիկոսական ընտրության կազմակերպման գործընթացի ներկայացումից, անդրադառնում է կաթողիկոսական գահի հնարավոր թեկնածուներին, ցույց է տալիս հարցի հետ կապված Ցարական Ռուսաստանի պաշտոնյաների հետաքրքրություններն ու դրանց բավարարմանն ուղղված ջանքերը: Այնուհետեւ ներկայացնում է բուն ընտրությունը եւ Մատթեոս Ա. կաթողիկոսի գործունեությունը՝ հատկապես 1836 թ. «Պոլոժենիային» առնչվող խնդրահարույց հարցերին: Ներկայացվող ժամանակաշրջանի ուսումնասիրությունը հետաքրքրական է եւ կարեւոր հատկապես նրանով, որ Մատթեոս կաթողիկոսի գահակալության ժամանակաշրջանը, նախորդելով եւ հաջորդելով իր արժանավոր նախորդ եւ հաջորդ կաթողիկոսների բուռն գործունեությանը, հանրապետական ստվերվել է պատմագիտության կողմից եւ քիչ է ուսումնասիրվել: Ուսումնասիրությունը նախատեսված է Հայ Եկեղեցու պատմությամբ հետաքրքրվող մասնագետների եւ ընթերցողների լայն շրջանակի համար: Դրանում առկա սկզբնաղբյուրների առատությունն օգտակար կլինի ինչպես Հայ Եկեղեցու պատմության, այնպես էլ Հայոց պատմության տվյալ

ժամանակաշրջանի ուսումնասիրությանը զբաղվող յուրաքանչյուր հետազոտողի համար:

Ը. Գոհար Մանվելյան, «Մակար Եկմալյանի Սուրբ Պատարագը. բազմաձայնության հաստատումը հայ հոգեւոր երաժշտության մեջ» (անգլերեն):

Աշխատանքն արժեքավոր է նախ եւ առաջ իր գիտաճանաչողական նշանակությամբ: Երաժշտասեր հանրության ուշադրությանն է ներկայացվում անգլերեն գրված մի ամբողջական հետազոտություն, որտեղ լուսաբանվում են հայ պրոֆեսիոնալ երաժշտության, հայ կոմպոզիտորական դպրոցի ձեւավորման սկզբնական՝ նախակոմիտասյան փուլում բազմաձայնությունն արմատավորելու եւ տարածելու բեղմնավոր փորձերն ու նշանակալից ձեռքբերումները: Աշխատանքը, հեղինակի դիտարկմամբ, նոր էջ է բացում ոչ միայն հայ, այլեւ ընդհանրապես Արեւելքի երաժշտության զարգացման համայնապատկերում: Առանձնապես նշելի են աշխատությունում հայ հոգեւոր խմբերգային ավանդույթին վերաբերող դատողությունները՝ ազգային երգեցողության ոճական առանձնահատկությունների ձեւավորման ոլորտում արեւմտյան եւ ուսական կատարողական դպրոցներում հաստատված սկզբունքների կողմնորոշիչ նշանակության վերաբերյալ: Ակնհայտ է հեղինակի քաջատեղյակությունը հայ հոգեւոր երգարվեստի եւ Պատարագի ձեւավորման ընթացքին, ծիսաարարողական եւ կառուցվածքային խորքային շերտերին: Հետաքրքիր նկատառումներ կան նաեւ Հայոց Արեւելյան եւ Արեւմտյան եկեղեցիներում կայունացած շարականերգության ինքնատիպ ելեւէջումների կապակցությամբ: Մակար Եկմալյանի առաջադեմ երաժշտաստեղծագործական գործունեության արժեւորմանն ու Պատարագի քննությանը նվիրված սույն հետազոտությունը՝ Արեւելք—Արեւմուտք մշակութային ավանդույթների սինթեզման շեշտադրումով, իր նպաստը կբերի Արեւմուտքի երաժշտական հանրությանը հայ երաժշտության պատմությանն ու անանց գեղարվեստական հոգեւոր արժեքներին հաղորդակից դարձնելու գործում:

Թ. Իոհան ավագերեց Մեյենդորֆ «Ամուսնությունն ուղղափառության մեջ» (ռուսերենից թարգմանությունը եւ ծանոթագրությունը՝ Տ. Անդրեաս վրդ. Եզեկյանի, լեզվաբանական խմբագիր՝ Լուսինե Վարդանյան):

Ի. դարի ուղղափառ ականավոր աստվածաբան եւ բյուզանդագետ Իոհան ավագերեց Մեյենդորֆն իր «Ամուսնությունն ուղղափառության

մեջ» աշխատությունն մեջ հանրամատչելի կերպով, սակայն պահպանելով գիտական բարձր մակարդակը, ներկայացնում է ամուսնության քրիստոնեական ընկալման ձեւավորման եւ զարգացման ընթացքը, ինչպես նաեւ անդրադառնում ամուսնության վերաբերյալ Ուղղափառ Եկեղեցիների որդեգրած տեսակետներին ու արդի մարտահրավերներին: Աշխատության հրատարակումը հնարավորություն կընձեռի հայ ընթերցողին ծանոթանալու ամուսնության վերաբերյալ բյուզանդական Ուղղափառ Եկեղեցիների ունեցած տեսակետներին (որոնք մեծավ մասամբ համընկնում են Հայ Եկեղեցու ընկալումների հետ) եւ առանձնահատկություններին:

Ժ. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն. հրատարակությունների մատենագիտություն (1772–1920)» (կազմողներ՝ Մայա Գրիգորյան, Ստյոպա Պետոյան, Գոհար Գրիգորյան, Գոհար Նազարյան, Շողիկ Ոսկանյան, Հասմիկ Սուվախյան, Անի Գալստյան):

Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի՝ 1771 թ. հիմնած տպարանը մի նոր էջ բացեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմության մեջ: Այն ոչ միայն մեծ ձեռքբերում էր տպագրության գործը հայոց հողի վրա առաջին անգամ ներկայացնելու տեսակետից, այլեւ հետագա երկուսուկես դարերի ընթացքում դարձավ այն բացառիկ հարթակը, որի վրա դրսևորվեց հայ մտավոր, գիտական, հոգեւոր, մանկավարժական եւ գեղարվեստական միտքը: Տպարանի գործունեության ամենափայլուն դրսևորումներից է ԺԹ. դարավերջի եւ Ի. դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում հրատարակված բարձրարժեք գիտական գրականությունը, որի կիրառականությունը եւ արդիականությունը՝ ուստի եւ կարեւորությունը, հայագիտության եւ առնչակից բնագավառների համար պահպանվել են մինչեւ այսօր: Այս կարեւորությունն է, որ ներշնչել է էջմիածնական հրատարակությունների՝ նկարագրված մատենագիտության կազմումը եւ հրատարակումը: 2021 թ. լրանում է էջմիածնի տպարանի հիմնադրման 250-ամյակը, ինչը տոնելու լավագույն միջոցներից մեկը համապատասխան մատենագիտությամբ նշանավորելն է: Առավել խորհրդանշական է, եթե այդ գիրքը լույս տեսնի Մայր Աթոռի հրատարակչատանը՝ որպես Սիմեոն կաթողիկոսի հիմնած գործի լիիրավ շարունակող: Չնայած մեզանում մատենագիտություններ կազմելու կայացած ավանդույթին՝ էջմիածնական հրատարակությունների մատենագիտությունը շարունակում է անհասանելի մնալ մասնագետների եւ ընթերցողների համար:

Այս բացը լրացնելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ կազմվել է 1772—1920 թթ. էջմիածնական հրատարակությունների մատենագիտությունը, որը ներկայումս գտնվում է վերստուգման եւ խմբագրման փուլերում: Աշխատանքն ընդգրկում է շուրջ 700 միավոր հրատարակության մանրամասն նկարագրություն (ներառյալ մի քանի միավոր պարբերականներ՝ բացառելով, սակայն, «Արարատ» ամսագիրը, որի մատենագիտությունն արդեն առկա է)՝ ուղեկցված համապատասխան տիտղոսաթերթերի լուսանկարներով, ծանոթագրություններով եւ նախընթաց մատենագիտական աղբյուրներում ու ցանկերում տեղ գտած հիշատակումների ցանկագրմամբ: Մատենագիտությունն սկսվում է խմբագրի ընդարձակ առաջաբանով, որում ներկայացված է Մայր Աթոռի տպարանի հիմնադրման եւ հրատարակչական գործունեության պատմությունը մինչեւ 1920 թ., ինչպես նաեւ դրանում լույս տեսած հրատարակությունների նշանակությունը գիտական ժառանգության տեսանկյունից: Առաջաբանը եզրափակվում է մատենագիտության կազմման սկզբունքների ներկայացմամբ, որոնք որդեգրվել են՝ հաշվի առնելով գիտական մատենագիտությունների կազմման ժամանակակից եւ ավանդական մոտեցումները՝ նպատակ ունենալով դյուրացնել ընթերցողների փնտրտուքը եւ հնարավորություն տալ լավագույնս ծառայեցնել այն գիտահետազոտական, մատենագիտական, գրքագիտական եւ գրադարանային նպատակներին:

ԺԱ. «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության. Մկրտիչ Ա. Խրիմյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1892—1907), գիրք ԻԴ., մաս Գ. փաստաթղթերի ժողովածու»-ի (կազմող՝ Գոհար Ավագյան, խմբ.՝ Գրիգոր Առշակյան):

Հայրապետական կոնդակները չափազանց կարեւոր, հավաստի եւ արժեքավոր տեղեկատվություն են պարունակում հայ ժողովրդի պատմության ամենատարբեր բնագավառների վերաբերյալ (Եկեղեցու պատմություն, հոգեւոր կյանք, հոգեւորականների գործունեություն՝ նշանակումներ, պարգեւատրումներ, օրհնության գրքեր եւ այլն, կրթություն, մշակույթ, քաղաքական կյանք, հասարակական կազմակերպություններ եւ այլն): «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» մատենաշարի հերթական ԻԴ. հատորում ընդգրկված են Մկրտիչ Ա. Խրիմյանի 1893—1896 թթ. ընթացքում արձակած թվով 1053 կոնդակները, որոնցից 673-ը հրապարակվում են ամբողջությամբ, իսկ 380-ի համառոտ բովանդա-

կուլթյունը տեղ է գտել «Զհրապարակվող կոնդակների ցանկ» բաժնում: Բոլոր փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի ազգային (ՀԱԱ) եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՄԱՍԷԱ) արխիվներում: Ժողովածուն բաղկացած է «Փաստաթղթերի ժողովածու», «Զհրապարակվող կոնդակների ցանկ», «Ցանկ անձնանունների», «Ցանկ տեղանունների», «Ցանկ փաստաթղթերի» բաժիններից: Փաստաթղթերի հնագրագիտական ձեւակերպումն իրականացվել է գործող կանոնների համաձայն: Յուրաքանչյուր փաստաթուղթ ունի խմբագրական վերնագիր, ստեղծման թվականն ու վայրը, արխիվային հիմքերը, փաստաթղթի իսկույթյունն ու վերարտադրման միջոցը: Փաստաթղթերի ճնշող մեծամասնությունը հրատարակվում է առաջին անգամ՝ բնագրի լեզվով. պահպանվել են շարադրանքի լեզուն եւ ոճը, կատարվել են ուղղագրական որոշ շտկումներ: Ժողովածուն հագեցած է ծանոթագրություններով, որոնց կազմման համար օգտագործվել են հիմնականում արխիվային սկզբնաղբյուրներ, ինչպես նաեւ եղած գրականությունն ու տարբեր բառարաններ:

ԺԲ. Շնորհի արք. Գալուստյան, «Մ. սաղմոսի մեկնություն» (արեւմտահայերենից փոխադրումը՝ Դավիթ արք. Գիշյանի, խմբագրումը՝ Հովհաննես արք. Ավետիսյանի եւ Ն. Գրիգորյանի):

«Մ. սաղմոսի մեկնություն» գիրքն ուրույն տեղ է զբաղեցնում հայ մեկնողական գրականության շարքում՝ լինելով հայրաբանական մեկնողական ժառանգության եւ արդի աստվածաշնչագիտության ձեռքբերումների հրաշալի համադրություն: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հեղինակը մեկնաբանում է Մ. սաղմոսը մի քանի հարթություններում՝ սկսելով սաղմոսի պատմական համատեքստից, հասնելով հոգեբարոյական արդի խնդիրներին: Հեղինակը լուսաբանում է որոշ բնագրագիտական խնդիրներ՝ համադրելով եբրայեցերեն եւ հունարեն բնագրերը, գրաբար եւ աշխարհաբար թարգմանությունները՝ ի հայտ բերելով կարելուր տարրերը: Եւ տալիս իր ուրույն բացատրությունը: Հաշվի առնելով Հայ Եկեղեցու ծիսական կյանքում Սաղմոսաց գրքի լայն կիրառությունը՝ հեղինակն առանձին ընդարձակ անդրադարձ է կատարել նաեւ հայոց ծիսական ավանդությանը: Մ. սաղմոսը հատկապես հաճախագեղ կիրառություն ունի Հայ Եկեղեցու աղոթական կյանքում եւ սիրելի է իր ապաշխարողական բնույթի շնորհիվ: Նպատակ ունենալով հարստացնել սուրբգրային հայ մեկնողական ժառանգությունը եւ առավել մեծ լսարա-

նի ուշադրությունը ներկայացնել սույն փոխադրությունը՝ Մայր Աթոռի հրատարակչությունը կարեւորել է վերջինիս արեւելահայերեն փոխադրության հրատարակությունը:

ԺԳ. Տ. Մովսես վարդապետ Սարգսյան, «Արդարացի պատերազմի տեսությունը» (խմբագիր՝ Տ. Արարատ Բահանա Պողոսյան):

Ներկայացված աշխատանքը սեղմ ներկայացնում է պատերազմի ու զինվորական ծառայության վերաբերյալ սուրբգրային տեսակետները՝ դրանց հավելելով Եկեղեցու սուրբ հայրերի բացատրություններն ու մոտեցումները, փորձելով ցույց տալ սուրբգրային այն գաղափարը, ըստ որի, եթե ժողովուրդը հավատարիմ է Աստծուն, ապա Աստված միշտ օգնում է հաղթանակ տանել անգամ թշնամու քանակային առավելության դեպքում: Հեղինակը, հենվելով մասնագիտական գրականության վրա, շեշտում է, որ Աստվածաշունչը պատերազմի մասին տալիս է նաեւ ընդհանուր բարոյական սկզբունքներ, որոնցից կարելի է բխեցնել հստակ կանոններ. միաժամանակ գրքում ներկայացվում է վաղ Եկեղեցու հայրերի մեկնությունների եւ զինվորական ծառայության վերաբերյալ նրանց վերաբերմունքը: Աշխատության մեջ հեղինակը փորձել է վերլուծել ու ներկայացնել արդարացի պատերազմի դոկտրինը՝ նպատակ հետապնդելով արդարացի պատերազմի տեսության վերաբերյալ ուսումնասիրության մեջ պատերազմի բարոյական արդարացման մասին հիմնավորումներ տալ, միեւնույն ժամանակ, անհրաժեշտությունից ելնելով, նախեւառաջ ներկայացնել պատերազմի էթիկայի երեք հիմնական ուղղությունները՝ պացիֆիզմը, միլիտարիզմը, ռեալիզմը՝ յուրաքանչյուրի դեպքում վկայակոչելով պատմական իրադարձությունների, դրանց հետ կապված նշանավոր հեղինակների ու եկեղեցական հայրերի կարծիքներն ու հիմնավորումները՝ տալով դրանց իրավական, քաղաքական, կրոնական, բարոյական օբյեկտիվ վերլուծություններ:

ԺԴ. Յասմին Դում-Տրագուտ, Քրիստինա Մարանցի, Սերժիո Լա Պորտա, «Արցախի հայկական հոգեւոր-մշակութային ժառանգությունը. Ադրբեջանի կողմից ներկայումս բռնազավթված տարածքում գտնվող նշանավոր սրբավայրերը», անգլերեն (խմբագիր՝ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյան):

Ուշադրության կենտրոնում գտնվող գրքույկն Ադրբեջանի զինված ուժերի կողմից 2020 թ. նոյեմբերից վերահսկվող՝ Արցախի շրջաններում

գտնվող նշանավոր սրբավայրերի, եկեղեցիների, վանքերի եւ դրանց ենթակառուցվածքների մասին անգլերեն գրված նկարագրողական կոլեկտիվ ուսումնասիրություն է: Գրքույկի հեղինակները՝ Յասմին Դուլմ-Տրագուտը, Քրիստինա Մարանցին եւ Սերջիո Լա Պորտան, Ջալցբուրգի, Տաֆտի եւ Կալիֆոռնիայի համալսարանների միջազգային ճանաչում ունեցող պրոֆեսորներ են, որոնց հետազոտությունների կենտրոնում տարիներ շարունակ գտնվում են քրիստոնյա Արեւելքին, հայերին, Հայաստանին եւ Հայոց Եկեղեցուն առնչվող տարբեր թեմաներ՝ պատմությունից մինչեւ ճարտարապետություն: Հեղինակների այսպիսի ներգրավվածությունը հնարավոր է դարձրել հետազոտվող նյութը ներկայացնել ամենատարբեր տեսանկյուններից: Ուստի գրքույկում տեղ են գտել սրբավայրերի հիմնման պատմությունները, աշխարհագրական տեղորոշման հստակ նկարագրությունները, եկեղեցիների ճարտարապետական եւ մշակութային առանձնահատկություններն ու արժեքը, իսկ որոշ դեպքերում ազգագրական կարեւորություն ունեցող հանգամանքները: Ներկայացված են նաեւ առանձին սրբավայրերի հիմքում գտնվող սրբազան մասունքների կամ այդ սրբավայրերի հետ կապված սրբերի պատմությունները: Գրքույկի նյութերը համալրված են եկեղեցիների եւ վանքապատկան այլ շինությունների գունավոր լուսանկարներով ու հատակագծերի ճշգրիտ գծանկարներով: Անգլերեն գրված այսպիսի աշխատության առկայությունը, անշուշտ, խիստ կարեւոր է նախեւառաջ միջազգային հանրությանն Արցախի հայկականությունը փաստելու եւ նշված շրջաններում Հայոց Եկեղեցու դարավոր մշակույթը ներկայացնելու տեսանկյունից, ուստի այսպիսի գրքույկի հրատարակումը խիստ շահեկան է:

ԺԵ. Հենրիկ Սվալգան, «Աղվանից աշխարհի հոգեւոր առաջնորդները եւ առաջնորդանիստ կենտրոնները» (խմբագիր՝ Վահե Թորոսյան):

Աշխատությանում հայկական աղվանագիտության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում են դրկից այս երկրի հոգեւոր գործիչների կյանքն ու գործունեությունը, վեր հանվում հասարակական-քաղաքական տարբեր պայմաններում նրանց որդեգրած դիրքորոշումը, ի ցույց դրվում Հայոց եւ Աղվանից Եկեղեցիների դավանական համերաշխությունն ու նրանց համատեղ պայքարը: Անդրադարձ է կատարվում նաեւ առաջնորդանիստ կենտրոններին, դրանց տեղից տեղ փոխադրվելուն, մատնանշվում այդ տեղափոխումների քաղաքական, տնտեսական ու կրոնական

շարժառիթները, քննարկվում առանձին տեսակետներ, ճշգրտվում կամ հերքվում: Աշխատությունն ունի արդիական հնչեղություն: Նրա հրապարակ գալը պայմանավորված էր ոչ միայն նման գիտական հետազոտություն ունենալու անհրաժեշտությամբ, այլև այն անառողջ տրամադրությունները բացառելու կարեւորությամբ, որոնք տիրում են աղբբեջանական պատմական գիտության մեջ, հասարակական գիտակցության խորշերում եւ հետեւողականորեն խրախուսվում պետության կողմից: Երկու ժողովուրդների հոգեւոր կյանքի ուսումնասիրություն լինելով՝ ներկա աշխատությունը, ըստ էության, ի դեմս գրքում հիշատակվող կրոնական գործիչների, Հայոց եւ Աղվանից Եկեղեցիների անձնավորված պատմություն է, եւ նրանում առաջ քաշված խնդիրներն ու դրանց լուծումներն առավել իրատեսական են ներկայացնում տարածաշրջանում քրիստոնեության անցած ուղին: Ուստի, հաշվի առնելով այս հանգամանքը եւ նրա բերած նպաստը ուսումնասիրվող Եկեղեցիների պատմության ասպարեզում, նպատակահարմար ենք գտնում այն լույս ընծայել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ որպես Առաքելական Եկեղեցիների հովանավորի ու անդամվածան երաշխավորի:

Ժ.Զ. Գրիգոր Բեգլարյան, «Արցախի հոգեւոր-պատմական հուշարձաններ» ֆարտեզներ (հայերեն, անգլերեն, ռուսերեն):

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը, համագործակցելով Հայաստանում քարտեզների հրատարակչության գործում մասնագիտացած «Կոլաժ» հրատարակչության հետ, Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) ֆինանսավորմամբ է այն լույս ընծայել: Սա Մայր Աթոռի հրատարակչության առաջին փորձառությունն է առանձին քարտեզ հրատարակելու, սակայն վանքերի եւ եկեղեցիների տեղագրման խտության առումով նախագեպը չունի: Քարտեզները բացառիկ են նաեւ սահմանագծման տեսանկյունից, քանի որ երեք տարբեր գծագրումով նշված են Արցախի, ԼՂԻՄ-ի եւ ներկայումս աղբբեջանական զինված ուժերի կողմից 2020-ին բռնազավթված տարածքների սահմանները, որի միջոցով հնարավոր է հստակ տեղորոշմամբ տեսնել այն վանքերը, եկեղեցիները եւ պատմակրոնական նշանակություն ունեցող հուշարձանները, որոնք մնացել են գերության մեջ: Քարտեզները, վստահաբար, օգտակար կլինեն թե՛ պատմաբանների, թե՛ հուշարձանագետների, թե՛ միջազգայնագետների եւ թե՛ թեմայով հետաքրքրվող այլ անձանց:

ԺԷ. Սուրբ Հովհան Մանդակունի, «Ճառեր» (վերահրատարակություն):

ԺԸ. Իլարիոն արքեպիսկոպոս, «Քրիստոնեություն չկա առանց եկեղեցու» (վերահրատարակություն):

ԺԹ. «Գիրք աղօթից որ կոչի Կիպրիանոս: Վասն ամենայն ազգ պատահարաց որք գան ի վերայ մարդոյ» (վերահրատարակություն):

Ի. Ամենօրյա աղոթագիրք (վերահրատարակություն):

ԻԱ. Ս. Գրիգոր Նարեկացի, «Մատենան ողբերգութեան, արեւմտահայերէն», թարգմանիչ՝ Միսաք Գոչունեան (վերահրատարակություն):

ԻԲ. Ս. Գրիգոր Նարեկացի «Մատյան ողբերգության, արեւելահայերէն», թարգմանիչ՝ Մկրտիչ Խերանյան (վերահրատարակություն):

ԻԳ. Պատի օրացույց 2022, կազմող՝ Տ. Արարատ Բհն. Պոլոսյան:

ԻԴ. Եկեղեցական օրացույց 2022, կազմող՝ Տ. Միքայել արք. Աջապահյան:

ԻԵ. Սեղանի օրացույց 2022, կազմող՝ Հրատարակչական բաժին:

Պատրաստեց
Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԸ

